



Աշխատանքային պարտականություններ և գործառույթներ

- Իրականացնում և վերահսկում է ծրագրի շրջանակներում ճանապարհների վերակառուցման և բարելավման նախագծերի և պայմանագրերի կառավարման գործընթացը՝ համաձայն դոնոր կազմակերպությունների և ՀՀ կառավարության միջև ստորագրված վարկային համաձայնագրերի,
- պատասխանատու է որոշարկելու, վերլուծելու ՀՀՄՆԾ պայմանագրերին առնչվող բոլոր հարցերը և վերջիններիս վերաբերյալ դոնոր կազմակերպությունների հետ համակարգելով տրամադրելու խորհրդատվություն ծրագրի գլխավոր գործադիր տնօրենին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին և Կառավարման խորհրդին,
- հանդիսանում է գնման հարցերով կապող օղակ Խորհրդատուների, պետական մարմինների և դոնոր կազմակերպությունների միջև, ինչպես նաև զարգացնում և պահպանում է անմիջական հարաբերություններ կառավարության մարմինների հետ՝ գնումներին առնչվող հարցերի ուղղությամբ,
- արդիականացնում է ծրագրի գնումների պլանը և ներկայացնում համապատասխան մարմիններին,
- մշակում է Գնումների գործառնության ձեռնարկը՝ գնումների ներքին ընթացակարգերը, միջոցները, մեթոդները և գործընթացները դոնոր կազմակերպությունների գնումների ուղեցույցների և կիրառվող օրենսդրությանը համաձայն հաստատելու նպատակով,
- արդիականացնում է պայմանագրերի շնորհումը և վերադասի հաստատումից հետո ներկայացնում համապատասխան մարմին,
- պատրաստում է ծրագրի առաջընթացի մասին հաշվետվություններ,
- վերանայում է վճարման հաշիվ-ապրանքագրերը և անհամապատասխանության դեպքում բացահայտում ուղղման ենթակա կետերը,
- աջակցում է իրավական ոլորտի մասնագետին դատական հայտերի և արբիտրալ դատավարությունների ընթացքում,
- վերահսկում է խորհրդատուների/կապալառուների/մատակարարների կատարողականը և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում հետևողական քայլեր,
- անհրաժեշտության դեպքում, խորհրդատուի և կապալառուի համապատասխան անձնակազմի հետ համակարգելով, պատրաստում է փոփոխման հրամաններ և ձեռք բերում պահանջվող հաստատումներ,
- խորհրդատուի համակարգմամբ՝ վերլուծում շուկայի գները և ապրանքների/ծառայությունների մրցունակությունը և արդիականացնում ծրագրի համար անհրաժեշտ ապրանքների, արտադրանքի և ծառայությունների մեկ միավորի գների տվյալների բազան,
- խորհրդատուների հետ համատեղ կատարում է շուկայի վերլուծություն վերջին 5 տարիների համար և գնահատում գնումների պատմությունը Հայաստանում, գնահատում ռիսկերը, հնարավորությունները և պատրաստում առաջարկություններ, որոնք պետք է կիսամյակի կտրվածքով արդիականացվեն և ներկայացվեն վերադասին, պետական և դոնոր կազմակերպություններին,
- կատարում է գործառույթից բխող վարկային համաձայնագրերում և այլ ծրագրային փաստաթղթերում նախատեսված այլ հանձնարարություններ,
- կատարում է գլխավոր գործադիր տնօրենի այլ առաջադրանքներ:

**Իմացություն և որակավորում՝**

- բարձրագույն կրթություն քաղաքացիական շինարարության (ճանապարհաշինության) և/կամ դրան առնչվող ոլորտներում,

- առնվազն 5 տարվա փորձառություն հանրային և/կամ մասնավոր ոլորտների նմանատիպ զարգացման ծրագրերի ոլորտում,
- միջազգային և տեղական գնումների հայցեկարգերի և ստանդարտների տիրապետում,
- **FIDIC** տեսակի պայմանագրերի իմացություն և փորձառություն (դիտարկվելու է որպես առավելություն),
- գերազանց հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն (գրավոր և բանավոր),
- ծանոթություն միջազգային կազմակերպությունների ընթացակարգերին (հատկապես՝ Ասիական Զարգացման Բանկ, Համաշխարհային Բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, Եվրասիական զարգացման բանկ և այլ դոնոր կազմակերպություններ),
- համակարգչային գիտելիքներ (առնվազն **Word, Excel, PowerPoint, Microsoft project** կամ նմանատիպ այլ ծրագիր):

#### Մասնագիտական հմտություններ`

- գերազանց վերլուծական և ներկայացման հմտություններ,
- դիվանագիտական և բանակցային հմտություններ,
- խնդիրների լուծման և արագ որոշումներ կայացնելու հմտություններ,
- պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
- համագործակցող/թիմակից,
- արտագնա աշխատանքային այցեր կատարելու պատրաստականություն,
- արտաժամյա և լարված ռեժիմով աշխատելու ունակություն:

#### Աշխատանքի պայմաններ և դրույթներ`

- Աշխատանքի պայմաններն ու դրույթները կառավարվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքականությամբ և ընթացակարգերով և աշխատանքային պայմանագրով: